

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

Հնդկաստանի հայերը կազմելով Սպահանի թեմական միջնակի մի մասը, ի վաղուց անտի սովորություններն էր, որ Հնդկաստանի քահանաները ուղարկվում էին Սպահանից՝ Այդ սովորությունը որքան էլ անկարգ, որքան էլ վնասակար լինէր, դարձեալ պահպանուում էր տեղային առաջնորդներին, որովհետեւ նրանց շահերին ձեռնասուէր Բայց Գրիգորիսի օրերում նա հասաւ ամենագոգուելի անարգություններ։ Օրինակ Հնդկաստանի այս և այն կողմերը հարկաւոր էր ուղարկել մի քանի քահանաներ (այս գործի համար կան մեզ օժտ քահանաների մի շար, որոնք ուրախութեամբ յանձն են առնում միջնակ պաշտօնը), Գրիգորիսը աճուրդէ էր դնում այն երկրները քահանայական պաշտօնը և սր տէրէրէր շատ էր վճարում, Գրիգորիսը ներան էր ուղարկում Հնդկաստան։ Միթէ այդ կատարելա կապալաւորութիւն չէ, միթէ այդ կառավարութեան նոյն ձևը չէ, ինչ որ անում է պարսից իշխանութիւնը, յանձնելով մի երկրի կառավարութիւնը այն անձին, որ կանխապէս տալիս է բարձր իշխանութեանը մի նշանաւոր գումար։ Փող տոռնալով քահանաներից նրանց Հնդկաստանում պաշտօն տալու համար, ի հարկէ, այդ հանգամանքի մէջ առաջնորդը պէտք է զանց անէ այն պայմանները թէ որքան այս և այն քահանան արժանաւոր էր իր յանձն առած պաշտօնին, —այլ զվարարելու նա պէտք է ուշք դարձնէ այն քանի վրա, թէ ո՞ր քահանան անկ փող էր տալիս, թող նա տգէտ լինէր, թող անբարոյական լինէր, միւս նոյն է, նա կը ստանայ պաշտօնը, որովհետեւ միւսներից անկ էր վճարել իր առաջնորդին։ Այս տեսակ քահանան, որ իր պաշտօնը փողով էր գնել մի տեսակ վաճառական է, որ հետեանպէս պէտք է ինքն էլ չանլի իր գնած նիւթից։ Եւ երբ հասնում է նա իր պաշտօնի տեղը, սկսում է այնուհետեւ ամենայն միջոցներով աշխատել իր շահերի համար, որ կարողանայ դուրս բերել այն գումարը, որ սկզբից վճարել էր առաջնորդին, Եւ բացի դրանից, իր համար եւ փող վաստակել։ Դրովուրդը զգլխով է նրանից, բողբոլում է առաջնորդին, խնդրում է փոխել քահանային, բայց առաջնորդը չէ ցանկանում փոխել, որովհետեւ քահանայից փող է ստացել և նրան չորս տարի պայմանով պաշտօն է յանձնել, պէտք է նա լրացնէ իր ժամանակը։ Այս տեսակ անկարգութիւնները ոչ տակաւ երկպառակութիւններն պատճառ են տալիս Հնդկաստանի հայերի և Սպահանի առաջնորդաւորն մէջ, այլ ևս չեմ խօսում այն քանի վրա, թէ մի վարձկան քահանայ ինչ բարոյական կամ հոգեւոր ազդեցութիւն կարող է ունենալ իր ծովափ վրա բացի զպթականութիւնից և բացի նրանց մոլորութեան մէջ գցելուց։ Եթէ այդ լինէր Հայաստանում, այնքան ցտալի հետեանքներ ունենալ չէր կարող, բայց երևանապէս, որ, օրինակ Բիրմանիայում գտնվում է 20—30 տուն հայ ժողովուրդի։

Նրբեկվայ տօնի պատճառով «Մշակի» այսօրվա համարը հրատարակում ենք կէս թերթի մեծու թեամբ:

